## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2013թվականի N 14-Ա

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի" 2013թվականի մայիսի 20-ի թիվ 42 դրական եզրակացությունը.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի պահանջներով.համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արարատի մարզի Նորամարգ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում.համայնքային սեփականություն հանդիսացող 0356-0012 ծածկագրի 4.3005 հա արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը փոխադրել գյուղատնտեսական նշանակության հողերի /արոտավայր/ կատեգորիա:

2.Համայնքի ղեկավարին՝

1)10-օրյա ժամկետում տեղեկացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին

2)Համայնքի հողային բալանսում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱՃՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

**Համայնքի ղեկավար՝** ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

2.Հաստատել Նորամարգ գյուղական համայնքի 2013թվականի ֆոնդային բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարված հետևյալ փոփոխությունները.

2013թվականի ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 410.0 հազ. դրամով ,հողի օտարումից մուտքերի հաշվին.

2013թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 9-8-1 Կրթություն(այլ դասերին չպատկանող) հատվածի 5113 հոդվածին ավելացնել 1980.0 հազ.դրամ ,կապիտալ նորոգման աշխատանքներ ձեռք բերման նպատակով.

2013թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 9-8-1 Կրթություն(այլ դասերին չպատկանող) հատվածի 5134 հոդվածին ավելացնել 40.8 հազ.դրամ ,նախագծահետազոտական ծախսերի ձեռք բերման նպատակով.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 հուլիսի 2013թվականի N 15-Ա

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ "ԾԻԱԾԱՆ" Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Նվազագույն աշխատավարձի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը ՝ 2013թվականի հուլիսի 1-ից 45.0 հազ. դրամ սահմանելու մասին.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 27 հունիսի 2013 թվականի թիվ 661-Ն որոշումով.համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակից՝ պայմանագրային աշխատող , հավաքարարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 60000/վաթսուն հազար/ դրամ.

2.Համայնքային ենթակայության "Ծիածան" մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների համար սահմանել հետևյալ պաշտոնային դրույքաչափերը.

| | |
|---|---|
| -Մանկապարտեզի տնօրեն | - 124000/հարյուր քսան չորս հազար/ դրամ |
| -Մանկապարտեզի դաստիարակ | -119000/հարյուր տասինն հազար/ դրամ |
| -Մանկապարտեզի հաշվապահ | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |
| -Մանկապարտեզի դայակ | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |
| -Մանկապարտեզի խոհարար | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |
| -Մանկապարտեզի երաժշտության ուսուցիչ | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |
| -Մանկապարտեզի տնտեսվար | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |
| -Մանկապարտեզի պահակ | -59530 / հիսունինն հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԳԱԼՍՏՅԱՆ